ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Վեպի ուսուցման առանձնահատկությունները հիմնական դպրոցում

Հետազոտող ուսուցիչներ՝ Ն. Հակոբյան, Լ. Դանելյան

Երևանի Կ. Ասրյանի անվ. հ.171 հիմն. դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..3

Վեպի ուսուցման առանձնահատկությունները հիմնական դպրոցում……....…….....5

Եզրակացություն…….21

Օգտագործված գրականության ցանկ……22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմությունն իմաստուն է, անցյալը՝ փորձով ու փորձություններով հարուստ: Մարդկության գեղարվեստական զարգացման արդի փուլում, երբ մեր կենցաղ են մտել զարգացած տեխնոլոգիաները, դարձյալ իր ժանրային կիրառական արժեքով տիրական դիրքեր գրավող վեպը ավելի ու ավելի հաճախ է հետադարձ հայացք ձգում տասնամյակների ու դարերի խորքը, յուրովի կամուրջ կապում հին ու նոր ժամանակների միջև:

Դարերի անհայտությունից, անցյալի խորքերից պեղել նոր ժամանակների համար կենսականը, վերակենդանացնել պատմությունը ու նրա գեղեցիկ ավանդույթներով հարստացնել ներկան: Ահա սա է վեպի առաքելությունը, և, իրոք, գեղարվեստական ոչ մի տեսակ այնպես համապարփակ ու մասշտաբային ձևով չի կարող կատարել այդ առաքելությունը, ինչպես վեպը:

Պատմությունը մարդկության հիշողությունն է, մարդկային հասարակության կենսագրությունը:

Գրողը այդ հիշողությունն արթնացնում է յուրովի, դառնում հասարակության կենսագիրը, նրա պատմության «փակված» էջերի վերծանողը: Պատմության այդ յուրովի հուշագրությունը կամ նրա «փակված» էջերի վերծանումը ենթադրում է նախ մեր ժամանակակցի հետ հաղորդակցություն, նրա գեղարվեստական աշխարհի սնունդ: Այդպես է պատմությունը վերաճում արդիականության, ձեռք պարզում մեր օրերին:

Անառարկելի ճշմարտություն է, որ միջին դասարանների գրականության դասընթացի խոր և համակողմանի յուրացումը հետագայում մեծապես նպաստում է գրական երկն ավելի լավ հասկանալուն, նրա գեղարվեստական արժանիքներն ըմբռնելուն:

Սա նշանակում է, որ ինչպես առհասարակ գրականության դասընթացի, այնպես էլ պատմահայրենասիրական երկերի ուսուցումը ցանկալի մակարդակի վրա դնելու համար անհրաժեշտ է տակավին միջին դասարաններում երեխաների մեջ սեր արթնացնել ժողովրդի անցյալի նկատմամբ, մշակել այդ անցյալին նվիրված ստեղծագործությունները հասկանալու կարողություն, որովհետև միայն նման բնույթի երկերը կարող են հունդ գցել մատաղ հոգիներում:

Երեխաների տարիքային առանձնահատկությունից ելնելով՝ կարելի է ասել, որ տասներկուսից մինչև տասնչորս տարեկան հասակը ամենահարմարն է պատմության նախապատրաստական պարապմունքների, փաստերը, դեպքերը, թվականները, վայրերը, անունները հետևողականությամբ ուսումնասիրելու համար:

Եվ, իրոք, երեխաները մի առանձին հետաքրքրությամբ են կարդում մեր հեռավոր ու մոտ անցյալին նվիրված բոլոր այն ստեղծագործությունները, որոնց մեջ փառաբանվում են մեր ժողովրդի լավագույն զավակների հերոսական արարքները և կամ ցույց են տրվում նրա պատմության տխուր էջերը:

Պետք է նշել, որ պատմական թեմայով գրված ստեղծագործություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ամենից առաջ տեսնել անցյալի և ներկայի տրամաբանական կապը, և, որ ամենակարևորն է, երևույթների նկատմամբ ունենալ պատմական մոտեցում, հանդես բերել փաստականի և երևակայականի որոշակի ըմբռնում:

Առանց այս պահանջների կատարման անհնար է պատկերացնել, ինչպես անցյալին նվիրված որևէ ստեղծագործության, այնպես էլ «Վերք Հայաստանի» վեպի լիարժեք ուսուցումը:



«Վերք Հայաստանի» Հառաջաբան

Ծավալով ու ժանրային առումով իններորդ դասարանցու համար բոլորովին նոր այս երկի ճիշտ ընկալումը մեծապես կնպաստի հետագայում «Սամվել», «Գևորգ Մարզպետունի» և «Վարդանանք» պատմավեպերի յուրացմանը: Դրանից ելնելով՝ հասկանալի է, որ մեր նոր գրականության հիմնաքարի ուսուցումը պահանջում է համակողմանի աշխատանք:

Ամենից առաջ անհրաժեշտ է բացատրել, որ լինելով 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի գեղարվեստական վավերագիրը՝ Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն պարունակում է պատմական իրական բազմաթիվ դեպքեր, մեր ժողովրդի անցյալից առնված այնպիսի եղելություններ, որոնց վրա հենվում է նույնիսկ գիտական պատմագրությունը: Իրական այդ դեպքերի ստուգապատում լինելու վերաբերյալ աշակերտների մեջ համոզմունք ստեղծելու համար առաջին և միակ հեղինակավոր աղբյուրը, որին պետք է դիմել, «Վերք»ի արարողն է, որը, էությամբ ձուլված լինելով երկին, միաժամանակ նրա բազմաթիվ էջերում հուշում է ընթերցողին, որ ինքը ոչ միայն ականջալուրն է, այլև ականատեսն է կատարված դեպքերի: Այդ համոզմունքը խոր և հաստատուն դարձնելու համար նպատակահարմար է հանձնարարել աշակերտներին, որ «Վերք Հայաստանի» վեպից դուրս գրեն այն հատվածները, որոնք պարունակում են պատկերված դեպքերին ականատես լինելու հեղինակի վկայությունները: Ահա այդ հատվածներից մի քանի օրինակ:

Պատկերելով «Վերքը» երկնելու պահը՝ Աբովյանը վեպի առաջաբանում գրում է. «Ճանճը առաջովս անցկենալիս, ուզում էի սպանեմ, էնպես էի վառվել: Հայաստանը հրեշտակի պես առաջիս կանգնել, ինձ թև էր տալիս: Ծնող, տուն, երեխայություն, ասած, լսած բաները էնպես էին

կենդանացել, որ էլ աշխարքը միտս չէր գալիս: Ինչ խուլ, կորած, մոլորած մտքեր ունեի, բոլորը բացվել, եդ էին եկել»:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը հենց սկզբից անվերապահորեն ընդգծում է, որ իր գրածը ուրիշ բան չէ, քան մանկութ օրերում «ասած ու լսած բաների, կորած ու մոլորած մտքերի» գեղարվեստական վերարտադրություն կամ էլ փաստի, եղելության նկարագրություն: Այդ վերջիններից է մանկական տարիների անձամբ կրած հետևյալ սարսափելի պատկերը. «Երեխա եմ ելել, որ էն տեղանց դուս եմ եկել, ամա էս օր էլ, որ մտածում եմ, թե Զանգվի կամրջի վրովը, յա բազարի մեյդանովն անց կենալիս, ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ոտով, ձեռով անում, չունքի լեզվով խոսալն էլ ղազաբ էր բերում, որ թեզ անց կենանանք, որ մեզ թուրք չտեսնի… »:

Ներկայացնելով վեպը՝ պետք է աշակերտներին ծանոթացնել հեղինակի լուսավորական և հայրենասիրական գաղափարներին:

Աբովյանի լուսավորականությունը կապված է նրա հայրենասիրության հետ, և դա ոչ միայն «Վերք Հայաստանի» վեպի բովանդակության կարևորագույն գծերից է, այլև վեպի մտահղացման կարևորագույն ազդակներից մեկը:

Աբովյանի՝ հայ ժողովրդի պատմության և հայ գրականության պատմության մատուցած մեծագույն ծառայություններից մեկը աշխարհաբարը նոր գրական լեզու դարձնելն ու նրա հեղինակությունը բարձրացնելն է: Լուսավորիչը իր վեպի առաջաբանում, առաջաբան, որ հայ նոր գրականության սկզբնավորման հրովարտակն է, գրում է. «Շատ անգամ մեկ հայ տեսնելիս ուզում էի էլած շունչս էլ ա հանեմ նրան տամ, բայց, ա՜խ, լեզուս փակ էր, աչքս՝ բաց, բերանս՝ բռնած, սիրտս՝ խոր, ձեռս՝ պակաս, մեր գրերն էլ՝ գրաբար, մեր նոր լեզուն էլ՝ անպատիվ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի»: Մեծ գրողը եկել է այն խոր համոզման, որ նոր բովանդակությամբ, նոր գաղափարներով գործն անհնարին է գրել հին գրական լեզվով: Գրաբարը ոչ միայն անհասկանալի էր ժողովրդական լայն մասսաներին, այլև, ինչպես խոստովանել է Աբովյանը, կաշկանդում, խեղդում էր գրողի միտքն ու հոգին և ստեղծագործական երևակայությունը:

Մյուս կողմից էլ հին գրաբար գրքերը չէին կարդացվում, որովհետև, ինչպես ասում է հեղինակը, ինչ կա՝ եկեղեցու վրա է, Աստծու ու սրբերի. «Ով չի ուզի լսել, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ի՞նչ զատ են, բայց մեր լեզվումը թե էսպես բաներ ըլին, թող աչքս հանեն, էլ ինչով էրեխեքին քո լեզուն սիրել տաս»:

Ուրեմն, Աբովյանը հրաշալի գիտակցել է բովանդակության և լեզվի փոխադարձ պայմանավորվածությունը, ուստի վճռականորեն մերժել է գրաբարի՝ իբրև գրական լեզվի գործածությունը: Աբովյանը «Պարապ վախտի խաղալիքի» առաջաբանում գրել է. «ՈՒզում էի, որ գրած բանս ամեն մարդ հասկանա, ու էնդուր համար աշխարհաբար գրեցի: Թող գիտուն մարդիքը ինձնից չնեղանան, նրանք շատ գիրք են կարդում, իրենց սիրտը մխիթարում, ամա հասարակ մարդը մեկն էլ ա չունի»:

Նա կսկիծով նշում է այն իրողությունը, թե ինչպես այն ժամանակ «Էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում», թե ինչպես, մանավանդ, որոշ ազաներ ու իշխաններ ամեն տեղ «իրենց զուռնան են գիշեր-ցերեկ փչում, թե ինչա հայի լեզուն, ով նրանից խեր կտեսնի, ում ձեռը մի փող կընկնի»: Այդ իրողությունը նկատի ունենալով՝ նա գրել է. «Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման, երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց»:

Աբովյանը ժողովրդին ծառայելու ուժգին մղումով ամենայն համարձակությամբ փշրում է գրական լեզվի հարցում եղած պահպանողական սովորույթները: Նոր գրական լեզվով ստեղծելով գեղարվեստական գրականություն, ինչպես և գիտական և մանկավարժական գրականություն՝ նա ձգտում է ժողովրդին դուրս բերել հետամնացությունից՝ վստահ, որ դրանով կբարձրանա նրանց հասարակական ուժն ու ակտիվությունը: Կարևոր է, որ աշակերտները ընկալեն վեպի հերոսի ընտրության աբովյանական մոտեցումը:

Խոր ժողովրդայնությունը հեղինակին մղել է այդ պատմական ժամանակաշրջանում գլխավոր հերոս ընտրել «հասարակ մարդուն»: Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում պատմական իրականությունը վեր է հանել նաև գլխավոր հերոս Աղասու գործողությունների միջոցով և նրա կերպարի մեջ մարմնավորել է իր աշխարհայացքի հիմնական գծերը: Աղասու կերպարի կերտումը վեպի գեղարվեստական ամենամեծ արժանիքներից մեկն է: Վեպի առաջաբանից երևում է, որ Աղասու ընտրությունը ոչ միայն խորապես մտածված է, այլև Աղասու անձնավորությունը եղել է պատմության տվյալ շրջանի հեղինակին ոգեշնչող կերպար: Նկարագրելով հերոսի ընտրության առթիվ ունեցած իր մտորումները՝ Աբովյանը խոստովանում է, թե «վերջը իմ ջիվան Աղասին միտս ընկավ, նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրենց գլուխը բարձրացրին, ու ամենն էլ ուզում էին, որ իրենց ոտը գնամ: Մյուսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ սալամաթ, փա՜ռք Աստծու, Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին ղուրբան: Ասեցի կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի»:



Աղասին գեղարվեստական ամբողջություն ներկայացնող հերոսական կերպար է: Ինչպես ամբողջ վեպը, այնպես էլ գլխավոր հերոսին կերտելիս, Աբովյանը, միանգամայն ճիշտ վարվելով, օգտագործել է ժողովրդական էպոսի կուլտուրան ու ոգին: Աղասին, որին անձամբ ճանաչել է Աբովյանը, վեպում գծագրվում է արտաքին այնպիսի գծերով, որոնց մեջ զգացվում է ժողովրդական նկարագրական ոճը. Նա առնական գեղեցկությամբ օժտված մի անձնավորություն է. «նրա սուրահի բոյը, նրա թուխ աչքերը… նրա լեն թիկունքը, բարձր ճակատը մարդի խելք էին տանում… էնքան ղվաթով էր, որ ձեռը մեկ տղամարդի գոտիկը որ չէր գցում, հավի ճուտի պես բարձրացնում, գլխի ծերն էր հանում, պտիտ տալիս, էլ եդ վեր բերում»:

Հսկայատիպ, «ասլան բալասի» անվանվող այս երիտասարդը ժողովրդի սիրելի և պաշտելի անձնավորությունն է, որովհետև իր բնավորության գծերով և հոգեբանությամբ նման է նույն ժողովրդի էպոսի բյուրեղյա մաքրությամբ, ազնվությամբ ու ուղղամտությամբ օժտված անձնավորություններին: Աղասին ունի քաղաքական և սոցիալական առողջ բնազդներ և ձգտումներ: Նա ուզում է, որ բոլորը հալալ աշխատանքով ապրեն և ինքը հարկ եղած դեպքում անձնվիրաբար պաշտպան է կանգնում նրանց, ում կյանքին և քրտնաթոր աշխատանքի արդյունքին վտանգ է սպառնում: Նա առանց խնայելու ոչնչացնում է գողերին ու ավազակներին: Աղասին լցված է մարդկային արժանապատվության զգացումով. նա սիրում է ժողովրդին, նախանձախնդիր է նրա մարդկային իրավունքներին, ուստի խորին ատելությամբ է լցված բռնադատիչ սարդարների, խաների և առհասարակ ամեն տեսակ կեղեքիչների նկատմամբ: Գեղարվեստական այս կերպարը այսօր էլ արդիական է. մեզ, մեր ազգին այսօր էլ պետք են այդպիսի հայրենասեր երիտասարդներ, և կան այդպիսիները, որոնք պատրաստ են իրենց կյանքը

զոհել հանուն հայրենիքի, թույլ չեն տալիս, որ վայրենաբարո թուրքը մտնի մեր հողը, բռնադատի ու կեղեքի: Փա՛ռք բոլոր ժամանակների հայրենասեր, ազգին նվիրված հերոսներին:

Աղասու կերպարը մեծ տպավորություն է թողնում երեխայի հոգեկան աշխարհի վրա: Նա լցվում է ցասումով երկրի թշնամիների նկատմամբ: Աղասու վրա էլ մեծ տպավորություն է թողնում Անիի նկարագրությունը, քաղաք, որն իր անցյալի փառքով շոյում է Աղասու և նրա ընկերների հայրենասիրական զգացումները, նրանց հոգում առաջացնում է վշտի ու ցասման ալեկոծումներ:

Այդ ցասումն ու վիշտն էլ «Վերքի» քաջազուն հերոսներին մղում են այնպիսի անօրինակ սխրանքների, որոնք հատուկ են միայն հայրենիքին անմնացորդ նվիրված դյուցազուններին և որոնք էլ դաստիարակչական մեծ նշանակություն կարող են ունենալ աշակերտների համար:

Պետք է աշակերտները ընկալեն, որ վեպը հսկայական հետք է թողել հայ գրականության պատմության մեջ: Հետագա հայ բոլոր գրողներն էլ՝ արձակագիր թե բանաստեղծ, սովորել ու ոգեշնչվել են նրանից: Նա իր ազդեցությունն է թողել հայ հասարակական մտքի զարգացման վրա՝ ընթերցողին դաստիարակելով հայրենասիրության և ազգասիրության ոգով: Աբովյանը անձնազոհորեն խիզախեց խավարի և հետամնացության դեմ, ժողովրդի համար և հանուն ժողովրդայնության ի լուր աշխարհի հայտարարեց. «Թող ինձ այսուհետ տգետ կանչեն. լեզուս բաց ա էլել՝ ի՛մ ընտիր, ազիզ, ի՛մ սրտի սիրեկան ազգ: Թող տրամաբանություն գիտցողը իրան համքյարի համար գրի, ես՝ քո կորած, շիվարած որդին, քեզ համար»:

Պետք է աշակերտներին մեկնաբանել նաև վեպի վերնագիրը: Ինչու՞ վերնագրեց «Վերք Հայաստանի» կամ «Ողբ հայրենասիրի»: Պետք է նշենք, որ վեպը վերջանում է Աղասու և նրա հոր մահվամբ: Հայաստանը անցավ ցարական Ռուսաստանի տիրապետության տակ: Չիրականացավ հայ ժողովրդի ազատ, անկախ Հայաստանի գաղափարը: Հենց դա էր ողբը և վերքը հայ ժողովրդի:

Խ. Աբովյանը հիմնեց դպրոց: Նրա ժողովրդախոսակցական լեզուն, նյութի բովանդակությունը, միջավայրը շարունակեցին Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Ծերենցը, Մուրացանը, Ռաֆֆին: Աբովյանը նշեց, որ հայ ժողովուրդը միասնաբար, սեփական ուժերով պետք է ազատագրի հայրենիքը:



Ռաֆֆի, «Խենթը» վեպը

Հաջորդ վեպը, որը ուսումնասիրվում է հիմնական դպրոցում, Ռաֆֆու «Խենթ»-ն է: Աշակերտներին նախօրոք պետք է ներկայացնել Ռաֆֆու գեղագիտական հայացքները: Ռաֆֆին իր գրական կյանքը սկսել է 50-ական թվականների վերջերից: Նա 70-80-ական թվականների իր երկերով աննախընթաց բարձրության է հասցնում հայ գեղարվեստական արձակը, մանավանդ վիպասանական ժանրը և ձեռք է բերում մեծ ժողովրդայնություն: Նրա երկերը խորապես համակված են ժողովրդի՝ մասնավորապես գյուղացիության շահերի բուռն պաշտպանությամբ: Ռաֆֆին մեծ նշանակություն է տալիս գեղարվեստական գրականությանը՝ գտնելով, որ այն, իբրև կախարդական հայելի, հասարակական կյանքը արտացոլելով, ներգործում է նրա վրա և կյանքում եղած բացասական կոմերը սուր քննադատությամբ բացահայտելու և վերացնելու հնարավորություն ընձեռում՝ ելնելով պատմական այն իրողությունից, որ այն ժամանակ հայության մի խոշոր հատվածը գտնվում էր Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության տակ: Անլուր կեղեքման և ֆիզիկական բնաջնջման էր ենթարկվում հողի տերը՝ հայ գյուղացին: Մեծ վիպասանը այն համոզումն ուներ, թե ազգային առաջընթացին ուղղված ամեն մի նախաձեռնություն իրականացնելիս նախ պետք է ճանաչել այդ ազգը իր բարքերով, կենցաղով, հակասություններով, տնտեսական ու հոգևոր կացությամբ: Այս իմաստով նա առանձնահատուկ նշանակություն էր տալիս գրականությանը, մասնավորապես վեպին: «Ռոմանները, - գրում է Ռաֆֆին, - ազգերի գրականության մեջ կատարում են ամենակարևոր պաշտոն. ռոմանները՝ որպես ազգերի բարոյական և իմացական կյանքի պատմագրությունք, ավանդում են նոցա բարք ու վարքը, նոցա սովորությունների կենդանի պատկերքը գալոց սերնդին: Ռոմաններն են այն

կախարդական հայելիքը, որոնց մեջ ազգերը, տեսնելով յուրյանց կյանքի տգեղ ու ավերված պատկերքը, յուրյանց մոլորությունների ամոթալի նկարագիրը, ուսանում են շինել և բարեկարգել յուրյանց դրությունը»:

Դրանից ելնելով՝ պետք է աշակերտներին բացատրել, որ այստեղ կարևորվում է երկու հատկանիշ՝ նախ իրականության ճշմարիտ արտացոլումը, որը գրականությանը տալիս է պատմաճանաչողական արժեք, և ապա կյանքի արտասովոր երևույթների քննադատությունը, որը մատնացույց է անում կատարյալի ուղին:

Ռաֆֆին հանդիսացավ ռոմանտիկական ուղղության ներկայացուցիչը: Նա ուներ իր ռոմանտիկ հերոսներին ուղղություն տվող գլխավոր գաղափար: Այդ գաղափարը, որը սկիզբ է առնում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից, թելադրում է մի գերագույն ճշմարտություն, որ մենք ազգ ենք, ունենք մեր հավատը, մեր կրոնը, մեր հայրենիքը, մենք ունեցել ենք անցյալ, հոգևոր և մշակութային պատմություն, և որ մենք իրավունք ունենք տնօրինելու այն, ինչը մեր էթնիկական սեփականությունն է և մարդկայնության մեր իրավունքը: Որոշ ժամանակ Ռաֆֆին հավատում էր, թե քաղաքակրթությունն ու լուսավորությունը կցրեն արևելքի բարբարոսությունը, և հայերը Պարսկաստանում և Թուրքիայում ձեռք կբերեն ազատություն: Այդ գաղափարն 80-ական թվականներին նա արդեն համարում էր ցնորք: «Թուրքն այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա»: «Մենք ունենք պատմություն, - հիշեցնում է Ռաֆֆին, - 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը: Նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված: Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կրում իր դատապարտության դատակնիքը: Մի՞թե երեկվա գազանը կարող է այսօր հրեշտակ դառնալ»:

Ռաֆֆին միասնության կոչ է անում հայ ժողովրդին, զենքի է կոչում և նշում, որ միասնական պայքարով միայն հայ ժողովուրդը ձեռք կբերի իր ազատությունն ու անկախությունը:

Նա գրում է իր ծրագրային վեպերը՝ «Խենթը», «Կայծեր», «Ջալալեդդին»:

Վիպասանը մի յուրօրինակ ձև տվեց հայ ազգային վեպին: Նա կարծես հաստատում էր, թե գեղարվեստը օրենքներ չունի, իսկ եթե կան այդպիսի օրենքներ, ապա դրանք միանգամայն ենթակայական են ազգային կյանքի կոնկրետ հանգամանքների հոգեբանական գոյության հանդեպ:

Վարդանը՝ «Խենթը» վեպի գլխավոր հերոսը, ընդհանուրի ու մասնավորի հոգեբանական երկվությունը լուծում է այսպես. «Նա այլևս չի մաքառում մտքերի, զգացմունքների և հոգեկան տանջանքի խռովության հետ: Ամեն ինչ միանգամով վճռվեցավ նրա մեջ: Այժմ նա գիտեր, թե ինչ պետք էր անել: Ընկերի սերը հաղթեց կնոջ սերին»: Ընկերոջ կորստյան մեջ սպանվում է գաղափարը, հարստահարված ու թշվառ գյուղացու ազատության գաղափարը, որի մեջ բովանդակվում է ոչ միայն Լալայի, այլ հազարավոր կանանց պատիվը և փրկությունը: «Խենթը» վեպը օրերի ճակատագրական հարցն էր և նույնքան տագնապալից պատասխանը:

Վերլուծելով կերպարը՝ աշակերտները պետք է կարողանան մանրամասն ներկայացնել դիպաշարը: Հայ կամավորական Վարդանը հնարամտությամբ դուրս է գալիս թուրքական զորքերով ու քուրդ հրոսակախմբերով պաշարված Բայազետից՝ բերդաքաղաքին սպառնացող աղետի մասին լուր տալու ռուսական զորքերի հրամանատար Տեր-Ղուկասովին, ապա շտապում է

ազատելու մեկի կյանքը, որ ամեն բանից թանկ էր իր համար և որի ճակատագրի վերաբերյալ վատ բան էին գուշակում Բագրևանդ գավառից հասնող չարաղետ լուրերը: Գաղթականների հետքերով որոնումները նրան տանում են Վաղարշապատ, և այդտեղ նա գտնում է միայն սիրելի Լալայի գերեզմանը: Սյուժետային այս պատմությունը սոսկ մի կաղապար է, որի ներքին տարածություններում ետադարձ հայացքը բացում է գաղափարների և իրականության վիպական կառույցը, ուր իբրև կենտրոն հանդես է գալիս տանուտեր Խաչոյի նահապետական գերդաստանը: Սա վեպի գեղարվեստական միջավայրն է, որի մասին պետք է տեղեկացնել աշակերտներին: Տանուտեր Խաչոյի տանն են իրար հետ առնչվում գրեթե բոլոր հերոսները և այստեղ են ստուգվում առաջադրված հարցերն ու իրենց գաղափարական-փիլիսոփայական մեկնությունները:

Ռաֆֆին մի առանձնահատուկ մանրամասնությամբ է նկարագրում Խաչոյի գերդաստանի ներքին կյանքը՝ աշխատանքի, վաստակի, ապրելակերպի, նիստուկացի մի կատարյալ համերաշխություն: Եվ ինչ-որ երկյուղ, վերահաս աղետի նախազգացում պղտորում է գերդաստանի հոգեկան ներդաշնակությունը. չարիք գուշակող մի ուրվական՝ քուրդ Ֆաթթահ բեկի կերպարանքով, հայտնվում է և պահանջում իր տուրքը: Որդին ըմբոստանում է, բայց հայրը կանխում է նրան իր պատճառաբանությամբ. «Մեզ դժվար է միանգամով ոչնչացնել այն, ինչ որ մեր պապերը տնօրինեցին մեզ համար: Մենք քաղում ենք նրանց ցանած հիմարությունների դառը պտուղը»: Դա չէր գլխավոր չարիքը, այլ անմիաբանության այն ախտը, որ կարծես ի վերուստ սահմանված անեծք՝ տրված է ազգի հոգեբանությանը: «Մենք հայ ենք, Աստծո անեծքը գրած է մեր ճակատի վրա. մենք մեր ձեռքով մեր տունը քանդում ենք: Անմիաբանությունը, երկպառակությունը, նախանձը, թշնամությունը և հազար ու մեկ այս տեսակ չարություններ շատ ժամանակներից բույն են դրել մեր հոգու մեջ, և մենք կրում ենք այդ մեղքերի պատիժը»:

Ռաֆֆին ստեղծում է Թովմաս էֆենդու կերպարը, որը արտաքին և ներքին այլանդակությամբ խտացված մի ազգուրաց էր, որ ավելի վատթար էր, քան թուրքը և քուրդը: Ստոր է, դավադիր և բանսարկու: Նա կարծես հագուրդ է տալիս չարության իր բնազդներին և հենց նրա մատնությամբ է, որ թուրք ոստիկանները բանտարկում են Վարդանին, Սալմանին և կործանում Խաչոյի գերդաստանը: «Ո՞վ էր մեղավոր» հարցը բանավեճի նյութ պիտի դառնար վեպի գաղափարական հերոսների միջև: Տանուտեր Խաչոն հոգևոր հայրերի ամենօրյա քարոզներում լսել էր, թե «համբերությունը կյանք է»: Սալմանը, որ եղել էր Եվրոպայում և ծանոթ էր քաղաքակիրթ մարդկության հայտնի տեսություններին, նշում է. «Համբերությունը մահ է. միայն

գերեզմանի մեջ մարդ կարող է համբերող լինել: Եթե կա մի բան, որ կարող է փրկել հարստահարված ու ճնշված ժողովուրդներին, դա բողոքն է»: Փարիզյան մթնոլորտում կրթված այս երիտասարդը, որ հայրենիք էր վերադարձել (Միքայել Դուդուկչյանը՝ նույն ինքը Լևոն Սալմանը), ըստ էության վեպի գաղափարական կրողն է, և նրա միջոցով է Ռաֆֆին արտահայտում արևմտահայ ժողովրդի ազատագրության իր ծրագրային դրույթները: Ազատագրական-հեղափոխական պայքարը, ըստ Սալմանի, անիմաստ ցնորք է, քանի դեռ այդ գաղափարը չի դարձել ամբողջ ժողովրդի սեփականությունը. «Երբ որևիցե ժողովրդական շարժման գաղափարը,- ասում է նա, - մի քանի անհատների երևակայության ցնորքն է միայն և տակավին չի ընդհանրացել, չի տարածվել ամբոխի գոնե մի մասի մեջ, մի հարվածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինք ոչնչացված կլինեն: Բայց ամբոխն ուրիշ բան է, ամբոխի մեջ միտքը սպանել անհնարին է»: Այստեղից արդեն հետևում է նախապատրաստություն, որի առաջնային պայմանը անձնապաշտությունն է, այսինքն՝ ֆիզիկական գոյության համար անհրաժեշտ է զինված ինքնապաշտպանություն. «Հիմա աշխարհի կարգն այդպես է, և միշտ այդպես է եղել, ով որ զենք գործածել չգիտի, ով որ արյուն թափելու և մարդ կոտորելու ընդունակություն չունի, նրան ասում են՝ դու ազատ լինելու իրավունք չունես»:

Աշակերտները բանավիճելով եզրակացնում են, որ Խաչոն, Ֆաթթահ բեկը, Թովմաս էֆենդին, Սալմանը, Վարդանը, Լալան ժամանակի պատմական իրականությունը ներկայացնող տիպեր են, որոնց փոխհարաբերությունների մեջ բեկվում են սոցիալական կրքեր, ազգային իդեալներ, անձնական ճակատագրեր, մարդկային երազանքներ: Հենց միայն Խաչոն մի ամբողջ աշխարհ է ներկայացնում իր նահապետական գերդաստանով, իր կենսափիլիսոփայությամբ: Եվ երբ գաղափարական հայեցողությունները դրվում են կյանքի կոնկրետ հանգամանքների քննությանը, ասպարեզ է հանվում ճշմարտությունը՝ ի հայտ բերելով իդեալի և իրականության ներհակությունը: Հենց այս հակասության մեջ իրեն գտավ Սալմանը՝ պարզ գիտակցելով, որ պատմությունն իր առանձին դիտողություններն ունի, և ամենաճիշտ փիլիսոփայական թեորիան երբեմն կյանքի փորձության մեջ դառնում է սխալ: Առաջին շփումը ժողովրդի հետ շատ պատրանքներ է ցրում: Կույր նախապաշարմունքը, ստրկական համակերպությունը և բթացած անշարժությունը պարզապես զայրույթի խորշանք են ծնում Սալմանի հոգում: «Կատարյալ սֆինքս է, կատարյալ հանելուկ այդ ժողովուրդը, հա՛ մտածիր, հա՛ քննիր, դարձյալ չես կարող ճանաչել»:

Ո՞վ է իրավացի՝ ժողովու՞րդը, թե՞ մոլոր գաղափարներ քարոզող նորօրյա առաքյալը: Իսկ եթե ճշմարտությունն այն է, ինչ իրական է, ուրեմն առաքյալը խենթ է:

<<Խենթը>> վեպը Ռաֆֆին բացվում է ազգային առածներից առնված բնաբանով. «Խենթը մի քար գլորեց փոսը, հարյուր խելոքներ հավաքվեցին, չկարողացան դուրս հանել»:

Վեպի գաղափարը Ռաֆֆին հաստատում է ժողովրդական իմաստությամբ: Խենթը Վարդանն էր, որը ո՛չ իմաստասեր էր և ո՛չ մարգարե: Միայն նրա դատողությունները, մտածության ձևը գյուղացու աչքում խորթ էին: Հենց սա է, որ ի հայտ է բերում ազգային դժբախտությունը՝ Սալմանի քննադատական կիրքն ուղղելով իրական Հայաստանի պետքերին անգիտակ հայ մտավորականության անտարբերությանը: «Ի՞նչ արեցինք մենք: Ոչինչ: Մենք ամենևին նախապատրաստության հոգ չտարանք, որովհետև մեզ չէր հետաքրքրում իրական Հայաստանը իր սարսափելի թշվառություններով: Մենք շլացած էինք պատմական Հայաստանի անցյալ փառքով միայն: Մենք այժմյան Հայաստանը չէինք ճանաչում և ոչ մտածում էինք ճանաչել: Ոսկի երազները և վառ երևակայությունը գրեթե միշտ խաբել են հայերիս»: Քննադատության կիրքը Վարդանին ավելի հեռուն է տանում: Ազգային դժբախտության արմատները որոնելով բնավորության էթնիկական տրվածքում՝ նա հայոց պատմությունը ներկում է մատնության, դավաճանության, օտարահաճության արատներով և, հետևաբար, թե «հայը ինքն է փորել իր ազգային շինվածքի հիմքը, և ինքն է իր ձեռքով կործանել իր սուրբ ու նվիրական հաստատությունները»: Այս ամենը պետք է դաս լինի այսօր, մենք պատմությունից պետք է դասեր քաղենք և չկրկնենք անցյալի սխալները: Այսօր հայ երիտասարդը գիտակցում է այդ ամենը և վառված է հայրենասիրական կրակով: Հայ զինվորը կյանքի գնով էլ պատրաստ է պաշտպանել հող հայրենին: Վարդանը Սալամանին ասում է. «Հայ ժողովուրդը մի զարմանալի ժողովուրդ է. նրան սպանելը, եթե չասեմ անհնարին, կարող եմ ասել, որ շատ դժվարին է: Նա այն բազմագլխյան առասպելական վիշապն է, որ կոչվում է հիդրա, որի յուրաքանչյուր ջախջախված և կտրված գլխի տեղ բուսնում է մի նորը և ավելի զորավորը: Դարերի ընթացքում համաշխարային դարբնոցի սալի վրա հայը այն աստիճան ծեծվեցավ, տաշվեցավ և կոփվեցավ, որ ստացավ երկաթի ամրություն: Նրան ջախջախելը հեշտ չէ, նա չափազանց տոկուն է»: Հենց սա է, որ իմաստ է տալիս Ռաֆֆու նախապատրաստական ծրագրին, նրա հերոսները պարտություն են կրում, որովհետև հողը պատրաստ չէր սերմի աճելության համար, սակայն մեծ գործերը զոհեր են պահանջում, և այդ

զոհերն են, որ պիտի բացեն գալիք մաքառումների ճանապարհը: Այդ ճանապարհը այսօր բացված է…

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել վեպի վերջաբանին: «Խենթը» վերջանում է Վարդանի երազով, որտեղ Հայաստանը պատկերվում է 200 տարի հետո: Երազի մեջ հեղինակը ամփոփել է հայ ժողովրդի ապագայի նկատմամբ իր լավագույն բաղձանքները: Իհարկե, այստեղ բաբախում է իր հայրենիքը և ժողովուրդը, այսինքն՝ ջերմորեն սիրող հեղինակի սիրտը: Պատմական դժվար ժամանակներ էին, և Ռաֆֆին գտնում է, որ 200 տարի հետո միայն հնարավոր է իր երազանքների իրականացումը, քանի որ ազգի ազատագրության նախապատրաստական ծրագիրը կապում է մարդու կատարելագործման գաղափարի հետ: Կրթել միտքը, ազնվացնել հոգին, ամրացնել մարմինը ինքնին նշանակում է բարեկարգել հասարակությունը, մաքրել այն հոռի կրքերից, գռեհիկ բնազդներից, ընձեռել մարդուն կամքի գիտակցում, արժանապատվության զգացում, աշխատանքի և վաստակի սեփական ունակություն:

Երկար դեգերումներից հոգնած ու խորտակված հույսերով Վարդանին մնում է միայն գրկել Լալայի գերեզմանը և ողբալ առհավետ կորած իր սերը: Հենց այստեղ վշտի թմրությունը ընկղմում է նրան իր երազների աշխարհը, և երևակայությունը դարերի վրայով նրան տեղափոխում է ապագա վերածնված Հայաստան: Բնաշխարհը կարծես ծանոթ էր նրան՝ նույն լեռները, գետերն ու հովիտները, բայց «որքա՜ն փոխվել է կյանքը… ամեն տեղ շնչում է կրթության ոգին իր ջերմ, կենսագործող զորությամբ»: Թվում էր, թե սա հենց այն դրախտն է, որ «ոսկեղեն ժամանակներում Եհովան հիմնել էր Հայաստանի չորս գետերի ակունքի մոտ, ուր մարդը վայելում է բնության պարգևած Աստծու ճոխ սեղանից»: Բայց, ո՜չ, «դա ուրիշ դրախտ էր… Որ մարդն ստեղծում իր համար իր աշխատություններով ու իր արդար վաստակով: Ուր անմեղության տեղ տիրում էր խելացի գիտակցությունը, իսկ անհոգ, պարզ նահապետական կյանքի տեղ՝ զարգացած քաղաքակրթությունը»: Իդեալական հասարակության այս երազանքով է Ռաֆֆին ավարտում ազատության իր լեգենդը:

Վեպերի ուսուցումն առավել գրավիչ ու հետաքրքիր դարձնելու համար կարելի է ամփոփիչ դասաժամին կիրառել «Մտածողության 6 գլխարկներ մեթոդը»:

Ի՞նչ է «Մտածողության 6 գլխարկների մեթոդը»։ Այս մեթոդը հոգեբանական դերային խաղ է։ Որոշակի գույնի գլխարկը սահմանում է մտածողության առանձին ռեժիմ, և այն հագնելով, մարդը /տվյալ դեպքում՝ աշակերտը/ «միացնում» է այդ ռեժիմը։ Դա անհրաժեշտ է խնդրի վերաբերյալ ամբողջական կարծիքի ձևավորման համար, քանի որ մենք ավելի հաճախ խնդրի վերաբերյալ մտածում ենք ռացիոնալ, ինչը չի նպաստում պատկերի ամբողջականացմանը։

«Մտածողության վեց գլխարկները» մեթոդը հնարավորություն է դժվարությունները հաղթահարել մտային գործընթացը վեց տարբեր աշխատակերպ գլխարկների բաժանելու շնորհիվ։ Գլխարկներն իրարից տարբերվում են գույներով։ Համանմանորեն, երբ լիագույն տպագրությունը հնարավորություն է ընձեռում ստեղծել գունավոր նկար, վեց գլխարկների մեթոդը առաջարկում է այդպիսի գործընթաց իրականացնել մտածողության հետ։ Միաժամանակ ամեն ինչի մասին մտածելը պետք է փոխարինել տարբեր մտային տեսանկյունների կիրառման հերթականությամբ։ Արդյունքում, բոլոր տեսանկյունները ի մի են բերվում և ստացվում է «լիագույն մտածողություն»։

Իսկ ինչպե՞ս կարող ենք գործնականում կիրառել այս մեթոդը վեպերի դասավանդման ժամանակ։ Մեթոդի բուն իմաստն այն է, որ խնդիրը պետք է դիտարկել ոչ թե փաստարկների և գաղափարների պայքարում, այլ դրանց միասնության մեջ։ Այլ կերպ ասած, առավել ուժեղի և կենսունակի ընտրության նպատակով լավագույնի ընտրություն ենթադրվում է ոչ թե գաղափարների բախումով, այլ դրանց զուգահեռ խաղաղ գոյակցությամբ, որի պարագայում դրանք գնահատվում են հաջորդաբար, իրարից անկախ։

Վեպերի դասավանդումը վերը նշված մեթոդով.

ՓԱՍՏԵՐ

Աշակերտն առաջադրում է իրեն արդեն հայտնի թեմայի (վեպի) վերաբերյալ հարցադրումներ, թվարկում է, թե ինչպիսի տվյալներ են իրեն դեռ էլի անհրաժեշտ և ինչպես պետք է դրանք հայթայթել: Կիրառելով այս գլխարկը՝ կենտրոնանում է ձեռքի տակ եղած տվյալների վրա:

ԻՆՏՈՒԻՑԻԱ, ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ

Աշակերտները կարող են գործարկել բնազդը և զգացմունքները: Ի՞նչ է հուշում ներքին ձայնը: Բնազդային ենթադրությունները և զգացողությունները շատ կարևոր են, քանի որ հնարավորություն են տալիս հուզական ետնապատկերի և խնդրի նկատմամբ վերաբերմունքի մասին դատել մարդկային զգացմունքների տեսանկյունից: Հատկապես խմբային քննարկման ժամանակ կարևոր է, որ աշակերտները հասկանան մյուսների պատասխանները, խթանող ուժերը և ներկայացված լուծումների դրդապատճառները:

ՎԱԽԵՐ, ՌԻՍԿԵՐ

Այս գլխարկով աշակերտը պետք է լինի վատատես՝ առողջ քննադատության որոշակի

չափաբաժնով: Խնդրի լուծման առաջարկվող տարբերակները գնահատվում են ապագայում հնարավոր ռիսկերի, անկանխատեսելի և դժվարին իրավիճակների հետագա զարգացումների տեսանկյունից: Հարկավոր է ստեղծագործության մեջ գտնել թույլ տեղերը և ուշադրությունը կենտրոնացնել դրանց վրա:

ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշակերտը սկսում է մտածել կիրառվող լուծման առավելությունների, ինչպես նաև

կոնկրետ նպատակների, հեռանկարների և օգտակարության մասին: Աշակերտը պետք է ուշադրությունը սևեռի առաջարկվող գաղափարների առավելությունների վրա: Հարկավոր է ընդգծել յուրաքանչյուր խնդրի ուժեղ կողմերը և առավելությունները: Սա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ բոլոր տարբերակները բավականին տխուր են թվում:

ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշակերտը սկսում է համախմբել վեպի վերաբերյալ նոր գաղափարներ, ձևափոխել արդեն գոյություն ունեցողները, փնտրել այլընտրանքներ և հետազոտելու հնարավորություններ: Այլ կերպ ասած, ամբողջովին կիրառում է իր ստեղծարարությունը:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է ոչ թե աշխատանքի բովանդակության, այլ աշխատանքի ընթացքի ղեկավարման և գաղափարի իրականացման համար: Սովորաբար այն օգտագործվում է մեթոդի կիրառման ամենասկզբում, որպեսզի սահմանվեն սպասելիք գործողությունները, իսկ վերջում՝ ամփոփվեն արդյունքները և նախանշվեն նոր նպատակները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մարդու մեջ մարդկայնորեն գեղեցիկը հայրենիքի և ժողովրդի շահերին անձնականը զոհաբերելու կարողությունն է: Այսօր այդպիսի հերոսներ կան մեր կողքին, որոնք գիշեր-ցերեկ աչալրջորեն հսկում են մեր սահմանը և թույլ չեն տալիս «քաղաքակրթված» թուրքին մտնել մեր տարածք, բռնանալ ու թալանել: Բոլոր ժամանակներում թուրքը մնում է թուրք…

Այս վեպը մեր աշակերտներին հայրենասիրության մղելու մեծ դաս է: Մենք այսօր պատրաստում ենք ապագա զինվորին, որը դեռ դպրոցական նստարանից պետք է լցված լինի հայրենասիրությամբ, սիրի իր հայրենիքը, այն բարձր դասի ամեն տեսակ սրբություններից: Նա պետք է պատմությունից դասեր քաղի և երբեք չկրկնի անցյալի սխալները…

Գրականության դասերի ընթացքում պետք է զարգացնել աշակերտի արժեհամակարգը, աշակերտը պետք է գիտակցի, որ ինքն է իր ապագան կերտողը, դառնա ակտիվ քաղաքացի՝ զինելով իրեն համապատասխան գիտելիքներով և արժեքներով, փոփոխություն բերի իր կյանքում, իր երկրի զարգացման համար: Աշակերտը պետք է տեսնի, լսի և զգա:

Հարկավոր է հենց դասարանում սեր սերմանել միմյանց նկատմամբ: Նրանք պետք է սիրեն, հարգեն իրար, լինեն համախմբված, լսեն միմյանց: Մենք՝ հայերս, պետք է շարունակենք ապրել մեր հայրենիքում, իսկ ապրելու համար գիտելիք, հմտություն, արժեհամակարգ, սեր և դրսևորվելու կարողություն է հարկավոր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ. Մկրյան, «Էջեր հայ վիպասանության պատմությունից»
2. Սերգեյ Սարինյան, «Ռաֆֆի»
3. www.armedu.am